ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 28-ի N 1810 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 13-ի N551-Ա, 2022 թվականի հուլիսի 12-ի N552-Ա, 2022 թվականի հուլիսի 14-ի N553-Ա, 2022 թվականի հուլիսի 18-ի N554-Ա - N559-Ա, 2022 թվականի հուլիսի 20-ի N560-Ա որոշումների վերաբերյալ.

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N551-Ա որոշման վերնագրում բնակարանի հասցեն թերի է գրառված, բացի այդ որոշման նախաբանում հղումը ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N88 և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումներին չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին:
2. N552-Ա, N557-Ա և N560-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթին:
3. N553-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի և 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:
4. N554-Ա և N555-Ա որոշումների նախաբանում հղումը ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N88 որոշմանը սխալ է, բացի այդ անհրաժեշտ է որոշումների մեջ նշում կատարել հողամասերի սեփականատերերի վերաբերյալ: Որոշումների 3-րդ կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝Ռ.Գրիգորյան
22 օգոստոսի 2022թ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար 2022թվականի հուլիսի 13-ի թիվ 551-Ա և հուլիսի 18-ի թիվ թիվ 554-Ա,555-Ա,556-Ա որոշումների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 13-ի թիվ 551-Ա որոշման մեջ նշված չեն նշանակությունը փոփոխվող շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները այդ իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն տրամադրել իրավական ակտի ՀՀ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ:

Համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 18-ի թիվ 554-Ա և թիվ 555-Ա նույնաբովանդակ որոշումների մեջ կատարված ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88-Ն հղումը սխալ է,պետք է ղեկավարվել ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 18-ի թիվ 556-Ա որոշման վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝
Զ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.08.2022թ .
Կատարող՝ Հ.նալբանդյան